# Ութ տարի առաջ



Ութ տարի առաջ 1992 թ. ապրիլի 14-ին, սպանվել է ԼՂՀ ԳԽ առաջին նախագահ Արթուր Մկրտչյանը:

8 տարի առաջ մեր Շարժման պատմության մեջ մի խարան մնաց, որը հավասարապես ամեն հայի «բաժինն է» ճակատագրի տողատակում: Այդ ժամանակ Շարժումը զինված պայքար էր դարձել, հետո այդ պայքարը դարձավ պատերազմով նվաճված հաղթանակ: Եվ զինադադար եղավ, որը դեռ հաղթանակ բերած խաղաղություն չէ: Ու սպասումի 6 տարիներն են գլորվում դիվանագիտական սեղանների շուրջ: Կարծում եմ դա հայ ժողովրդի, հատկապես հայ արցախցու համար, կարեւոր չէ: Ինքն իրենն արել է. կերտել է իր պետականությունը դրոշակով, որի վրա ընդամենը սահմանագիծ կա, օրհներգով, որը հայի տեսակի (յուրահատուկ) նկարագրությունն է, զինանշանով, որը համայն հայությանն է...

Եվ արցախցին խտացումը եղավ հին դարի խորքում մնացած հայի եւ այսօր կերտում է ապագայի հային, որը լինելու է Արթուրի կերպով: Եվ այսօր ապրիլի 14-ին (այդպիսի օրեր, ավաղ, շատ եղան), ոչ մեկս իրավունք չունենք մեր կերպից հեռանալու կամ հրաժարվելու: Մեզանից ոչ մեկը իրավունք չունի հավատալու, որ մահ կա: Հայի համար մահ չկա: Այնպես, ինչպես որ ուրիշ կերպ չունի հայը արցախցու կերպից զատ, Արթուրի կերպից զատ: Նա իր համեստ-համեստ լռության մեջ տեսնում էր մտածածը: Եվ այս օրը դեռ ապրողներիս պարտքն է առանց թարգմանելու հասկանալ նրա լռությունը, չասվածը լսելու, դեռ չտեսածին հավատալու: Արթուրի լռությունը իր եղերական մահով, բոլորիս պարտադրում է հավատալ Արթուր հայի հավատին:

Պարտավոր ենք հավատալ, որ Արթուրը զարկվեց պայքարում, եւ պայքարը միայն մարտադաշտում չի լինում: